ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, գործավարություն, հեռ. 596-125

№ 27/1423 «12» 12 2023 թ.

ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ ՍՊԸ (ՀՎՀՀ 01043009)
ք.Երևան,Նոր Նորք 0056 Գայի պ./շ./11/20
էլ. հասցե՝ COWPERWOODCO@yandex.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և Կաուպերվուդ ընդ կո ՍՊ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև 30.12.2022 թվականին կնքված ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-23/13 ծածկագրով սննդամթերքի ձեռքբերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Կաուպերվուդ ընդ կո ՍՊ ընկերությունը չի կատարել ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ վերոգրյալ պայմանագրի շրջանակներում Վաճառողի կողմից փաստացի մատակարարվել է 1 538 800 /մեկ միլիոն հինգ հարյուր երեսունութ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամի սննդամթերք, իսկ 2023 թվականի նոյեմբերի 27-ին ընկերությանը Գնորդի կողմից հայտ է ներկայացվել սննդամթերքի հերթական չափաքանակի մատակարարման վերաբերյալ, սակայն մինչ օրս այն չի մատակարարվել:

Համաձայն Պայմանագրի 2.1-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողը էականորեն խախտել է պայմանագով սահմանված պարտավորությունները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը մասնակի միակողմանի լուծում է ՀՀ ներքին գործերի նախարարության և Կաուպերվուդ ընդ կո ՍՊ ընկերության միջև 30.12.2022 թվականին կնքված ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-23/13 ծածկագրով պայմանագիրը: Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Կաուպերվուդ ընդ կո ՍՊ ընկերությանը առաջարկվում է սույն ծանուցումը հրապարակվելուց հետո 5 /հինգ/ օրացույցային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության N 900005028106 հաշվեհամարին փոխանցել Պայմանագրի 6.3 կետերով նախատեսված տուգանք՝ 15 000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ, պայմանագրի 6.2 կետերով նախատեսված տույժ՝ 87 672 /ութսունյոթ հազար վեց հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամ, հակառակ դեպքում գումարները կգանձվեն դատական կարգով:

Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել ՀՀ ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժին /ք. Երևան, Նալբանդյան 130/:

Կաուպերվուդ ընդ կո ՍՊ ընկերության կողմից նշված գանձման ենթակա գումարները չվճարվելու դեպքում ընկերությունը կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

Գնումների համակարգման բաժին
Կատարող՝ Ա. Սարգսյան
Հեռ.՝ 010-59-61-52